ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

Ի պատասխան Ձեր 13.12.2023թ. հ.060 գրության՝ տեղեկացվում է, որ ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ նաև Դատարան) վարույթում քննվում է թիվ ՎԴ/5632/05/23 վարչական գործն ըստ հայցի «Միլ Հաուս» ՍՊ ընկերության (այսուհետ՝ նաև Հայցվոր) ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ (այսուհետ՝ նաև Պատասխանող) ընդունված համարվող բարենպաստ վարչական ակտը՝ ք. Երևան, Մինսկի փողոց 15, 15/1, 17/1 և 19/1 հասցեներում սեկցիոն բազմաբնակարան տների կառուցման շինարարության թույլտվությունը տրամադրել պարտավորեցնելու պահանջի մասին:

Դատարանի 27.07.2023 թվականի «Հայցադիմումը վարույթ ընդունելու, հայցի ապահովման միջոց ձեռնարկելու միջնորդությունը մերժելու և նախնական դատական նիստ հրավիրելու մասին» որոշման 2-րդ կետի համաձայն հայցվորների միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին, մերժվել է: Հաջորդիվ, Դատարանի 08.08.2023 թվականի «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին» որոշման համաձայն սահմանվել է՝ «Միլ Հաուս» ՍՊ ընկերության, Սարգիս Բորիկի Հովհաննիսյանի, Արարատ Սերգեյի Ղազարյանի ներկայացուցչի կողմից ներկայացված՝ հայցի ապահովման վերաբերյալ միջնորդությունը, բավարարել:

Միաժամանակ նույն որոշման երկրորդ կետով սահմանվել է՝ Երևանի քաղաքապետարանին պարտավորեցնել տրամադրել ք. Երևան, Մինսկի փողոց 15, 15/1, 17/1 և 19/1 հասցեներում սեկցիոն բազմաբնակարան տների կառուցման շինարարության թույլտվությունը: Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացվել է թվով երկու միջնորդություն հայցի ապահովումը վերացնելու վերաբերյալ, սակայն Դատարանի կողմից ներկայացված միջնորդությունները մերժվել են:

Բացի այդ, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության աշխատակից Ա. Զախարյանի կողմից 19.10.2023 թվականին հայտնաբերվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում, մասնավորապես՝ ինքնակամ իրականացվել են շինության հիմքի կառուցման և երկաթբետոնե սյուների մետաղական հենակմախքի մոնտաժման շինարարական աշխատանքներ, որի վերաբերյալ 11.10.2023 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ Ա-004479 արձանագրությունը: Հայտնաբերված իրավախախտման փաստով Պատասխանողի նախաձեռնությամբ հարուցվել է վարչական վարույթ և 14.11.2023 թվականին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ և 28.11.2023 թվականին կայացվել է «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումը: Տեղեկացվում է նաև, որ Երևանի քաղաքապետարանի կողմից նշված հիմքով ներկայացվել է

միջնորդություն հայցի ապահովումը վերացնելու վերաբերյալ: Միջնորդության քննարկման վերաբերյալ 19.12.2023 թվականին հերթական դատական նիստը կայացվել է և հայտնվել է, որ միջնորդության քննարկման արդյունքում կայացվելիք դատական ակտը կհրապարակվի «Datalex.am» դատական տեղեկատվական համակարգում:

Միաժամանակ տեղեկացվում է, որ դիմումով ներկայացված պահանջը ենթակա է քննարկման թիվ ՎԴ/5632/05/23 վարչական գործի շրջանակներում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ